ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ
2015 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2016

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան……3

ԲԱԺԻՆ 1.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները……4

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը……4

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……5

ԲԱԺԻՆ 2.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……6

2.1 Համակարգչային տեխնիկայի, լրասարքերի և ծրագրային փաթեթների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ……6

2.2 Ընկերության գործունեության կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ……7

ԲԱԺԻՆ 3.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……7

Հղումներ օգտագործված նյութերին……10

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի դեկտեմբերի 16-ի №439Լ որոշումով հաստատված 2016 թվականի աշխատանքային ծրագրի 29-րդ կետի և արտացոլում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2015 թվականի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրի և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2015 թվականի Ներդրումային ծրագիրը [Որոշում 1] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն 1]:

ԲԱԺԻՆ 1.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2015 թվականի Ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր սերվերային տեխնիկայի համար նախատեսված տարածքի բարելավում և կահավորում, ինչպես նաև սերվերային և համակարգչային տեխնիկայի, ծրագրերի և մարդատար արտաճանապարհային մեքենաների ձեռքբերում: Ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 44,2[1] մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Գրաֆիկ 1



[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը, բացառությամբ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման գների:

Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 45%-ը, նախատեսված էր մարդատար արտաճանապարհային ավտոմեքենաների ձեռքբերման համար, իսկ հաջորդ հիմնական հատվածը՝ շուրջ 42%-ը՝ սերվերային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերման համար:

Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում ենթաուղղությանը բաժին է ընկել ընդհանուր Ներդրումային ծրագրի 11%-ը, իսկ սերվերային տարածքի բարելավմանն ուղղված ներդրումներին՝ 2%-ը:

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Ընկերության փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ 2015 թվականի ընթացքում իրականացվել են 42,4 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջությամբ հանձնվել են շահագործման:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2015 թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը		2015 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրում-ային ծրագրի կատարման ցուցանիշը
		հազար դրամ	%	հազար դրամ	%	%
1	Սերվերային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում	18 640.0	42.2%	20 403.9	48.2%	109.5%
2	Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռք բերում	4 570.0	10.3%	1 702.2	4.0%	37.2%
3	Սերվերային տարածքի բարելավում	1 000.0	2.3%	349.4	0.8%	34.9%
4	Մարդատար արտաճանապարհային ավտոմեքենաների ձեռքբերում	20 000.0	45.2%	19 900.0	47.0%	99.5%
5	**Ընդամենը**	**44 210.0**	**100%**	**42 355.5**	**100%**	**95.8%**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից՝ սերվերային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերմանն ուղված ներդրումները կատարվել են են 109,5%-ով, իսկ համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռք բերմանն ուղղված ներդրումները՝ 37,2%-ով:

Սերվերային տարածքի բարելավմանն ուղղված աշխատանքները իրականացվել են 34,9%-ով, իսկ մարդատար արտաճանապարհային ավտոմեքենաների ձեռքբերման ուղղությամբ իրականացված ներդրումները՝ 95,5%-ով:

Արդյունքում Ընկերության 2015 թվականի Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը կազմել է 95,8%:

ԲԱԺԻՆ 2.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

2.1 Համակարգչային տեխնիկայի, լրասարքերի և ծրագրային փաթեթների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ

Այս ուղղությամբ Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 23,2 մլն դրամի ներդրումներ:

Սերվերային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերման ենթաուղղությամբ նախատեսված էր 18,6 մլն դրամով ձեռք բերել սերվերային ամբողջական համակարգ՝ ներառյալ ծրագրային փաթեթները, սակայն համաձայն Ընկերության կողմից ներկայացրած 2015 թվականի փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ նշված ձեռքբերումները իրականացվել են 20,4 մլն դրամով: Արդյունքում՝ Հանձնաժողովի կողմից հաստատված Ներդրումային ծրագիրը գերազանցվել է 1,2 մլն դրամով:

Ընկերության բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով՝ համակարգչային տեխնիկայի և ծրագրային փաթեթների ձեռքբերման ենթաուղղությամբ նախատեսված էր 4,6 մլն դրամով ձեռք բերել համակարգչային տեխնիկա, լրասարքեր և ծրագրային փաթեթներ: Համաձայն ներկայացված

հաշվետվության Ընկերությունը նշված ձեռքբերումները իրականացրել է 1,7 մլն դրամով՝ գրեթե ներդրումային ծրագրով նախատեսված ծավալից 37%-ով պակաս:

2.2 Ընկերության գործունեության կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Այս ուղղությամբ նախատեսված էր սերվերային տարածքի բարելավման և մարդատար արտաճանապարհային մեքենաների ձեռքբերման ենթաուղղություններով իրականացնել 21,0 մլն դրամի ներդրումներ:

Սերվերային տարածքի բարելավման ենթաուղղությամբ նախատեսված էր 1,0 մլն դրամ՝ սերվերային սենյակը կահավորելու և տարածքում սահմանված ձերմաստիճան ապահովելու նպատակով օդորակիչ տեղակայելու համար: Նշված աշխատանքները ամբողջությամբ իրականացվել են 0,4 մլն դրամով:

Մարդատար արտաճանապարհային ավտոմեքենաների ձեռքբերման ենթաուղղությամբ նախատեսված էր 20,0 մլն դրամով ձեռք բերել երկու ավտոմեքենա: Այս ենթաուղղությամբ 6,4 մլն դրամով ձեռք է բերվել 2005 թվականի արտադրության Nissan X-Terra մակնիշի և 13,5 մլն դրամով՝ Chevrolet Captiva մակնիշի արտաճանապարհային ամենագնաց ավտոմեքենաներ:

Ներդրումային ծրագրով յուրաքանչյուր ավտոմեքենայի համար նախատեսված էր 10,0 մլն դրամ, սակայն փաստացի Chevrolet Captiva մակնիշի ավտոմեքենան ձեռք է բերվել նախատեսվածից 3,5 մլն դրամ ավել գումարով:

ԲԱԺԻՆ 3.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման նպատակով վերլուծության ընթացքում իրականացվել են հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալների համադրում: Արդյունքում, Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 4,7

մլն դրամով (Բաժին 2), սակայն հաշվի առնելով Ընկերության կողմից ներկայացված հիմնավորումները [Գրություն 1], որ.

ա) սերվերային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերման ենթաուղղությամբ իրականացվելիք գնումների շուկայի ուսումնասիրությունը Ընկերության կողմից իրականացվել էր դեռևս 2014 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, իսկ գնման մրցույթը հայտարարվել էր 2015 թվականի հուլիսին և այս ժամանակահատվածում արտադրող ընկերությունները շուկային առաջարկել են տեխնոլոգիապես ավելի կատարելագործված սարքավորումներ՝ ավելի թանկ գներով, քան ուսումնասիրության ժամանակ, և հաշվի առնելով, որ համակարգչային տեխնիկայի և ծրագրերի արտադրության ոլորտի արագ փոփոխությունը ընկերության կողմից չէր կարող կանխատեսվել, ուստի այս ենթաուղղությամբ Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող 1,2 մլն դրամի ներդրումները հաշվի կառնվեն սակագնով (ծառայության վճարով) փոխհատուցման ներդրումների ծավալում,

բ) երկրորդային շուկայից ձեռքբերված 2005 թվականի արտադրության 6,4 մլն դրամ արժողությամբ Nissan X-Terra արտաճանապարհային ավտոմեքենայի շահագործման երկու ամիսները ցույց տվեցին, որ ընկերության կարիքները հոգալու համար նպատակահարմար է գնել տեխնիկապես ավելի հագեցած և դժվարագույն արտաճանապարհային պայմանները հաղթահարելու ունակ ավտոմեքենա, ինչպես նաև այն հանգամանքը, որ նոր ավտոմեքենան ավելի քիչ ծախսատար է, ուստի Chevrolet Captiva մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերման համաձայնեցված միավորի գինը գերազանցող 3,5 մլն դրամը ևս հաշվի կառնվի սակագնով (ծառայության վճարով) փոխհատուցման ներդրումների ծավալում:

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ աղյուսակ 2-ում ներկայացված է Ընկերության կողմից 2015 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 2
(մլն դրամ)

1	2015 թվականի ներդրումային ծրագրով հաստատված ներդրումների ընդհանուր ծավալը	**44.21**
2	2015 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ներդրումների ծավալը	**42.36**
3	**2015 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**42.36**

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 6-ի №107Ա որոշումը «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Հաշվետվություն 1- «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության 2016 թվականի մայիսի 10-ի №208ԼԳ գրությամբ ներկայացված հաշվետվություն

Գրություն 1- «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2016 թվականի հունիսի 13-ի №253ԼԳ գրությունը Ընկերության 2015 թվականին իրականացված ներդրումները հիմնավորելու վերաբերյալ